



Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
2014 թ. թիվ 70 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան 2014

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ ՀՀ) գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետև՝ ԳԱԱ) գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ ԳԿՄԿ) ուսանողական խորհուրդը (այսուհետև՝ ՈՒԽ) ուսանողության ներկայացուցչական, բարձրագույն, խորհրդատվական մարմին է:
- 1.2 ՈՒԽ-ն ինքնակառավարվող ընտրովի մարմին է:
- 1.3 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ-ն ապաքաղաքական կառույց է:
- 1.4 ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:
- 1.5 ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, «Կրթության մասին» ՀՀ օրենքին, այլ իրավական ակտերին, ԳԿՄԿ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
- 1.6 ՈՒԽ կանոնադրությունը չի հակասում ԳԿՄԿ կանոնադրությանը:

1.7 ՈՒԽ-ն կարող է ունենալ դրոշմ, ձևաթուղթ, խորհրդանիշեր, կնիք, որոնց ձևը և տեսքը ընդունվում է ՈՒԽ-ի կողմից, աշխատանքային սենյակ, առանձնացված գույք, պաշտոնաթերթ, ՈՒԽ դրամական ֆոնդ:

1.8 ՈՒԽ-ի լրիվ անվանումն է.

հայերեն՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողական խորհուրդ

ռուսերեն՝ студенческий совет международного научно-образовательного центра национальной академии наук Республики Армения

անգլերեն՝ student council of international scientific-educational center of national academy of sciences of Republic of Armenia.

1.9 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ-ի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24 դ:

ԳԼՈՒԽ 2

ՈՒԽ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՈՒԽ-ի նպատակներն ու խնդիրներն են.

2.1.1 Ապահովել ուսանողների մասնակցությունը ԳԿՄԿ-ի գործունեությանը:

2.1.2 ԳԿՄԿ-ի համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել մագիստրանտների կողմից բարձրացված հարցերը:

2.1.3 Մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

1.1.4 Հետևել կրթական բարեփոխումների նպատակային իրականացմանը:

2.1.5 Ուսանողների գիտական և կրթական առաջընթացի ապահովման նպատակով կազմակերպել համապատասխան սեմինարներ և գիտաժողովներ, միջոցներ ձեռնարկել մագիստրանտների թեզիսների հետ կապված խնդիրների արդյունավետ լուծման համար:

2.1.6 Խթանել ուսանողների ստեղծագործական, հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը՝ կազմակերպելով ուսանողների ազատ ժամանցին և հանգստին առնչվող միջոցառումներ:

2.1.7 Աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը՝ գտնելով համապատասխան կրթական ֆոնդեր և կրթության զարգացմանը աջակցող այլ հովանավորներ:

2.1.8 Միջոցներ ձեռնարկել ուսանողների զբաղվածության խնդիրների լուծման կապակցությամբ՝ համագործակցելով համապատասխան գործատուների հետ:

2.1.9 Հետևել ուսանողների և դասախոսների շահերը պաշտպանող կարգապահությանը:

2.10 Կապ ապահովել ամբիոնների, ուսումնամեթոդական մասի, գիտական խորհրդի, շրջանավարտների միավորման և զբաղվածության կենտրոնի հետ:

2.2 ՈՒԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով վերոնշյալ նպատակներից և խնդիրներից:

2.3 ՈՒԽ-ն կարող է համագործակցել ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական (մագիստրոսական), երիտասարդական և այլ ապաքաղաքական կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով համագործակցության և փոխշահավետության հիմունքներով:

ԳԼՈՒԽ 3

ՈՒԽ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

3.1 ՈՒԽ-ն կազմված է նախագահից, փոխնախագահներից, քարտուղարից և անդամներից:

3.2 Ըստ անհրաժեշտության ՈՒԽ-ի որոշմամբ կարող են ստեղծվել նաև ժամանակավոր հանձնաժողովներ:

3.3 ՈՒԽ-ի նախագահը, փոխնախագահները, քարտուղարը, ՈՒԽ անդամներն ընտրվում և նախագահում են ընտրության պահից սկսած մինչև մագիստրատուրայում ուսումնառության ավարտը:

ՈՒԽ ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգը

- ՈՒԽ նախագահն ընտրվում է ՈՒԽ արտահերթ նիստի ժամանակ քվեարկության միջոցով:
- Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է ՈՒԽ անդամների ձայների պարզ մեծամասնությունը:
- ՈՒԽ նախագահի ընտրությանը կարող են առաջադրվել ՈՒԽ բոլոր անդամները:
- ՈՒԽ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:
- Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:
- ՈՒԽ փոխնախագահներին և քարտուղարին նշանակում է ՈՒԽ նախագահը ՈՒԽ անդամների համաձայնությամբ:

- ՈԻԽ անդամները ընտրվում են ԳԱԱ ԳԿՄԿ կուրսերից՝ ՈԻԽ նախագահի, փոխնախագահի, քարտուղարի ներկայությամբ կատարված ընտրություններում:

ՈԻԽ անդամների գործառույթները

3.4 ՈԻԽ նախագահի իրավասության մեջ են մտնում հետևյալ գործառույթները

- համակարգել ՈԻԽ գործունեությունը,
- ներկայացնել ՈԻԽ-ն ՀՀ և արտերկրի բոլոր պետական և ոչ պետական մարմիններում. մասնավոր անձանց հետ հարաբերություններում,
- հրավիրել ՈԻԽ արտահերթ նիստեր,
- ապահովել կապը առկա և հեռակա ուսանողների հետ,
- եռամսյակը մեկ հանդես գալ ՈԻԽ գործունեության մասին հաշվետվությամբ,
- ապահովել ուսանողության կապը ԳԿՄԿ տարբեր ստորաբաժանումների համակարգող մասնագետների հետ,
- առաջարկություններ ներկայացնել տնօրինությանը ուսումնական գործընթացի վերաբերյալ:
- ՈԻԽ-ի անդամների ոչ կանոնադրական պահվածքի դեպքում կարող է նկատողություն կամ խիստ նկատողություն հայտարարել իր անդամներին, որոշակի ժամկետով զրկելով նրան ձայնի իրավունքից՝ ընդհուպ մինչև դադարեցնել անդամակցությունը ՈԻԽ-ին:

3.5 ՈԻԽ քարտուղարի իրավասության մեջ են մտնում հետևյալ գործառույթները

- արձանագրել ՈԻԽ նիստերը
- զբաղվել արխիվի հավաքագրման և պահպանման աշխատանքներով
- եռամսյակը մեկ հանդես գալ ՈԻԽ գործունեության մասին հաշվետվությամբ:

3.6 ՈԻԽ անդամների իրավասության մեջ են մտնում հետևյալ գործառույթները

- օրակարգում փոփոխություններ մտցնել,
- ապահովել ՈԻԽ-ի և տվյալ անդամի և իր կուրսի միջև կապը,

- Ձևավորել ԳԿՄԿ-ի առաքելիության իրագործման համար անհրաժեշտ պայմաններ կրթության որակի ապահովման ուղղությամբ:

3.7 ՈԻԽ նիստերը հրավիրվում են շաբաթական մեկ անգամ, որի օրակարգը սահմանում է ՈԻԽ նախագահը:

3.8 ՈԻԽ նախագահի կամ անդամների 2/3 -ի պահանջով կարող են հրավիրվել ՈԻԽ-ի արտահերթ նիստեր, որոնց օրակարգը սահմանում է հրավիրող կողմը:

3.9 ՈԻԽ-ի նիստերը իրավագոր են, եթե ներկա են անդամների 1/2 -ը. որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.10 ՈԻԽ անդամների լիազորությունները դադարում են նրանց դիմումի համաձայն:

3.11 ՈԻԽ նախագահի, փոխնախագահների, քարտուղարի հրաժարականի կամ նրանց լիազորությունների ՈԻԽ-ի կողմից դադարեցնելու դպքում ՈԻԽ-ն իր անդամներից ընտրում է տվյալ պաշտոնների ժամանակավոր պաշտոնակատարներ:

3.12 ՈԻԽ մյուս անդամների հրաժարականի կամ ՈԻԽ-ի կողմից լիազորությունների դադարեցնելու դեպքում հրավիրվում է համապատասխան կուրսային խորհրդի նիստ՝ իրենց ներկայացուցիչների ժամանակավոր պաշտոնակատարներ ընտրելու համար:

3.13 ՈԻԽ-ի աշխատանքները համակարգվում են ԳԿՄԿ ստորաբաժանումների ղեկավարների հետ:

ԳԼՈՒԽ 4

ՈԻԽ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ՈԻԽ-ի ֆինանսական միջոցները գոյանում են.

- ✓ ԳԱԱ ԳԿՄԿ բյուջեից,
- ✓ Նվիրաբերություններից,
- ✓ ՀՀ օրենսդրությանը , ԳԿՄԿ և սույն կանոնադրություններին չհակասող այլ աղբյուրներից:

ԳԼՈՒԽ 5

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կանոնադրությունն ընդունվում է ՈԻԽ կազմի կողմից:

Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ԳԿՄԿ ՈԻԽ-ի հաստատումից հետո:

ՈԻԽ-ն լուծարվում և վերակազմավորվում է ՀՀ օրենսդրությամբ և ԳԿՄԿ

կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՈԻԽ -ն կազմալուծվում է ՈԻԽ անդամների 2/3 քվեարկությամբ: